«ԳԵՂԱՐԴ» ԿՐՈՆԱԿԱՆ-ԱԶԳԱՅԻՆ-ԾԽԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹԸ

Մայր Աթոռի միաբան և Նիցցայի ու շրջակայքի (Ֆրանսիա) հոգևոր հովիվ տ. Տարոն վրդ. Ծերենյանը վերջերս վերսկսել է հրատարակել «Գեղարդ» եռամսյա ծխական պարբերաթերթը:

«Գեղարդ»-ը հրատարակվել է 1967 թվականին՝ իբրև ծխական պարբերաթերթ Մարսելի ս. Անտուան եկեղեցու, Մայր Աթոռի երիտասարդ միաբաններ տ. Վազգեն վրդ. Քեշիշյանի և տ. Տարոն վրդ. Ծերենյանի կողմից:

Երկրորդ անգամ պարբերաթերթը (թիվ 1—դեկտեմբեր 1973—փետրվար 1974) բացվում է Վեհափառ Հայրապետի ս. Ծննդյան պատգամով և պարբերաթերթի հրատարակության մասին խմբագրականով:

Նման պարբերաթերթի հրատարակումը արդարև «կարևոր է, անհրաժեշտ և հրամայական» ֆրանսիական հյուրընկալ հողի վրա հասակ առնող հայ նոր սերնդին բերելու համար ձայնը մեր եկեղեցու, քաղցրությունը մեր ազգային-եկեղեցական սրբությունների, պատգամը հայոց պատմության և Մայր Աթոռի հովանու ներքո հայ մնալու ու հայ ապրելու ազգային արժանապատվությունն ու հպարտությունը:

Պարբերաթերթն ունի հաղորդագրությունների, ազգային-եկեղեցական և էկումենիկ հարաբերությունների լուրերի և գրական բաժիններ՝ առնչված Նիցցայի հայ գաղութին:

Գրական բաժնում տպագրված է Ժաք Հակոբյանի «Հայր, հայերեն սորվեցուր» քառատուն բանաստեղծությունը, որը հայրենասիրական ջերմ շնչով գրված մի բանաստեղծություն է.

«...Տղուդ բերրի մտքին մեջ, հայր, անհաշիվ դուն ցանե
Հայ բառերու լույս հունտերը ապագայի իբրև ծառ,
Որուն շուքին կարենան փակել աչքերդ հեշտաբար»:

Նիցցայում և շրջակայքում այսօր ապրում են 730 ընտանիքներ: Համայնքը գնալով աճում ու բազմանում է: Համայնքի ազգային-եկեղեցական մարմինների և ծնողների գլխավոր մտահոգությունն է «մեր ժողովուրդի այսօրվան երիտասարդ ու պատանի սերունդին ազգային փրկության խնդիրը, ...ի շինություն և ի պայծառություն մեր դարավոր Մոր՝ Հայաստանյայց սուրբ եկեղեցվո և ի փառս մեր բազմաչարչար հարազատ ժողովուրդին»:

Այս ազնիվ, եկեղեցանվեր ու ազգային գործունեության ճանապարհի վրա գաղութի միացյալ ու համատեղ ջանքերով է՛լ ավելի հաջողության հասնելու համար վերջերս Նիցցայում տեղի են ունեցել Կրոնական ընկերակցության հոգաբարձության և թաղական խորհրդի նոր ընտրություններ՝ ըստ հետևյալ կազմի.

Կրոնական ընկերակցություն-հոգաբարձություն

Մուշեղ Ծիերճյան՝ պատվո նախագահ.
Լյուգաս Փափազյան՝ նախագահ (Գանի ներկայացուցիչ).

Թորգոմ Ղարիպյան՝ փոխ-նախագահ (Մոնակո-Մանթոն)·
Հարություն Փիլիճյան՝ ատենադպիր.
Տիգրան Տեմիրյան՝ փոխ-ատենադպիր.
Հարություն Հաթեմյան՝ գլխավոր գանձապահ.
Սուրեն Հաննեսյան, խորհրդատու.
Նուրհան Թագվորյան՝ խորհրդատու:

Թաղականություն

Մարկոս Կյուտենյան՝ ատենապետ.
Հովհաննես Տոնիկյան՝ ատենադպիր.
Միշել Փափազյան՝ գանձապահ.
Երամ Մարտիրոսյան.
Հարություն Տոմպուլյան:

1974 թվականի հունվարին «Նիսահայ տիկնանց միության հոգատարության Ներքեվ» կատարվել է նաև վերաբացումը տեղի «հայ միօրյա դպրոցի»: Դպրոցը գործում է չորեքշաբթի օրերին: Դպրոցում հայոց լեզու է դասավանդում հոգևոր հովիվ տ. Տարոն վրդ. Ճերեճյանը:

Պարբերաթերթի վերջում տրված է 1973 թվականի դեկտեմբերի 15-ից մինչև 1974 թվականի մարտի 31-ի եկեղեցական տոնական օրերի օրացույցը:

«Գեղարդ»-ն ունի նաև ֆրանսերեն մի բաժին՝ ֆրանսիախոս հայ նոր սերնդի համար՝ նպատակ ունենալով նրանց ծանոթացնել մեր ազգային սրբությունները, մեր ազգը:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն ողջունում է «Գեղարդ»-ի վերահրատարակությունը՝ մաղթելով հրատարակիչ հոգևոր հովվին հաջողություն և հարատևություն իր ազգօգուտ, եկեղեցանվեր ծառայության ճանապարհի վրա: